				- Մուսիդիաներ ոչ ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին	4511	52643.9	52643.9	0.0
2912	9	1	2	Տարրական ընդհանուր կրթություն		0.0	0.0	0.0
2920	9	2	0	Միջնակարգ ընդհանուր կրթություն, որից՝		0.0	0.0	0.0
2921	9	2	1	Հիմնական ընդհանուր կրթություն		0.0	0.0	0.0
2922	9	2	2	Միջնակարգ(ուսում) ընդհանուր կրթություն		0.0	0.0	0.0
2930	9	3	0	Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն, որից՝		0.0	0.0	0.0
2931	9	3	1	Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն		0.0	0.0	0.0
2932	9	3	2	Միջին մասնագիտական կրթություն		0.0	0.0	0.0
2940	9	4	0	Բարձրագույն կրթություն, որից՝		0.0	0.0	0.0
2941	9	4	1	Բարձրագույն մասնագիտական կրթություն		0.0	0.0	0.0
2942	9	4	2	Հետբուհական մասնագիտական կրթություն		16439.4	16439.4	0.0
2950	9	5	0	Ըստ մակարդակների չդասակարգվող կրթություն, որից՝		16439.4	16439.4	0.0
2951	9	5	1	Արտադպրոցական դաստիարակություն		16439.4	16439.4	0.0
				- Մուսիդիաներ ոչ ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին	4511	16439.4	16439.4	0.0
2952	9	5	2	Լրացուցիչ կրթություն		0.0	0.0	0.0

2960	9	6	0	Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ, որից՝		0.0	0.0	0.0
2961	9	6	1	Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ		0.0	0.0	0.0
2970	9	7	0	Կրթության ոլորտում հետազոտական և նախագծային աշխատանքներ, որից՝		0.0	0.0	0.0
2971	9	7	1	Կրթության ոլորտում հետազոտական և նախագծային աշխատանքներ		0.0	0.0	0.0
2980	9	8	0	Կրթություն (այլ դասերին չպատկանող), որից՝		0.0	0.0	0.0
2981	9	8	1	Կրթություն (այլ դասերին չպատկանող)		0.0	0.0	0.0
3000	10	0	0	ՄՈՏԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱԼՈՒԹՅՈՒՆ (տող 3010 + տող 3020 + տող 3030 + տող 3040 + տող 3050+ տող 3060 + տող 3070 + տող 3080 + տող 3090), սառ թևում՝		1000.0	1000.0	0.0
3010	10	1	0	Վատարողություն և անաշխատունակություն, որից՝		0.0	0.0	0.0
3011	10	1	1	Վատարողություն		0.0	0.0	0.0
3012	10	1	2	Անաշխատունակություն		0.0	0.0	0.0
3020	10	2	0	Մերություն, որից՝		0.0	0.0	0.0
3021	10	2	1	Մերություն		0.0	0.0	0.0
3030	10	3	0	Հարագատին կորցրած անձինք , որից՝		0.0	0.0	0.0
3031	10	3	1	Հարագատին կորցրած անձինք		0.0	0.0	0.0
3040	10	4	0	Հետախնդրի անդամներ և զավակներ, որից՝		0.0	0.0	0.0
3041	10	4	1	Հետախնդրի անդամներ և զավակներ		0.0	0.0	0.0
3050	10	5	0	Գործազրկություն, որից՝		0.0	0.0	0.0
3051	10	5	1	Գործազրկություն		0.0	0.0	0.0
3060	10	6	0	Բնակարանային ապահովում , որից՝		0.0	0.0	0.0
3061	10	6	1	Բնակարանային ապահովում		0.0	0.0	0.0
3070	10	7	0	Մոցիական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) , որից՝		1000.0	1000.0	0.0
3071	10	7	1	Մոցիական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)		1000.0	1000.0	0.0
				- Կրթական, մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից	4727	0.0	0.0	0.0
				- Այլ նպաստներ բյուջեից	4729	400.0	400.0	0.0
				- Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին	4819	600.0	600.0	0.0
3080	10	8	0	Մոցիական պաշտպանության ոլորտում հետազոտական և նախագծային աշխատանքներ, որից՝		0.0	0.0	0.0
3081	10	8	1	Մոցիական պաշտպանության ոլորտում հետազոտական և նախագծային աշխատանքներ, որից՝		0.0	0.0	0.0
3090	10	9	0	Մոցիական պաշտպանություն (այլ դասերին չպատկանող), որից՝		0.0	0.0	0.0
3091	10	9	1	Մոցիական պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)		0.0	0.0	0.0
3092	10	9	2	Մոցիական պաշտպանությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)		0.0	0.0	0.0
3100	11	0	0	ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ԶԴԱՄՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ (տող 3110), սառ թևում՝		117.9	17020.9	0.0
3110	11	1	0	ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ , որից՝		117.9	17020.9	0.0
3112	11	1	2	ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ		117.9	17020.9	0.0
				- Պահուստային միջոցներ	4891	-16785.0	117.9	0.0



# ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

13 սեպտեմբերի 2011թ.

ԹԻՎ 44(Ա)

### ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-Ի «ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 8(Ա)ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70 հոդվածի 5-րդ կետի պահանջներով ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով 6 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ

### ՍԻՍԻԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի քաղաքային համայնքի ավագանու 2011 թվականի մարտի 15-ի «ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի քաղաքային համայնքի սեփականության 2010 թվականի գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին» թիվ 8(Ա) որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.
  - 1) որոշման «2010թ. գույքագրման փաստաթղթերը» բառերից հետո «466342,4 հազ.» ՀՀ դրամ թիվը փոխարինել «485421.5 հազ.» ՀՀ դրամ թվով.
  - 2) որոշման հավելված 1-ի «1» տողի իններորդ սյունակի «22822,5 հազ.» ՀՀ դրամ թիվը փոխարինել «38018,0 հազ.» ՀՀ դրամ թվով.
  - 3) որոշման հավելված 1-ը լրացնել նոր տողով՝ 18 կետով «18 Շահումյան 76 հասցեում գտնվող կիսակառույց շենք /առանց արժեքի/».
  - 4) որոշման հավելված 1-ի «15» տողի երրորդ սյունակի «150555,9 հազ.» ՀՀ դրամ թիվը փոխարինել «153875.0 հազ.» ՀՀ դրամ թվով.
  - 5) որոշման «ընդամենը» տողի երրորդ սյունակի «403185,8 հազ.» ՀՀ դրամ թիվը փոխարինել «406504,8 հազ.» ՀՀ դրամ թվով.
  - 6) որոշման հավելված 2-ի 38 տողը լրացնել «ա.», «բ.», «գ.», «դ.» ենթակետերով. «ա. սահարան 3,6x0,7x2,4 – 580000 /հինգ հարյուր ութսուն հազար/ ՀՀ դրամ արժեքով». «բ. շղթաներով փոքր ճոճանակ 2,5x0,5x1,8-280000 /երկու հարյուր ութսուն հազար/ ՀՀ դրամ արժեքով». «գ. զսպանակով ճոճանակ /4 տեղ/, 2,6x0,4x0,8-324000 /երեք հարյուր քսանչորս հազար/ ՀՀ դրամ արժեքով». «դ. սեղան-նստարան /L-2m/ -162000 /հարյուր վաթսուն երկու հազար/ ՀՀ դրամ արժեքով».

7) որոշման հավելված 2-ը լրացնել նոր տողով՝ 76 կետով.

«76 Աղբաման՝ թվով 30 հատ. 1260000 /մեկ միլիոն երկու հարյուր վաթսուն հազար/ ՀՀ դրամ»

8) որոշման հավելված 3-ի «14» տողի «150555,9 հազ.» ՀՀ դրամ թիվը փոխարինել «153875.0 հազ.» ՀՀ դրամ թվով.

9) որոշման հավելված 3-ը լրացնել նոր տողով 17 կետով.

«17 Կիսակառույց շենք /Շահումյան 76/, առանց արժեքի»:

10. «ընդամենը» տողի երրորդ սյունակի «403185,8 հազ» ՀՀ դրամ թիվը փոխարինել «406504,9 հազ.» ՀՀ դրամ թվով:

2. Համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթները:

Կողմ -6

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ Հ.

2. ԱՎԱԳՅԱՆ Ա.

3. ԱՐՇԱԿՅԱՆ Ա.

4. ԴԱՎԹՅԱՆ Ա.

5. ԻՎԱՆՅԱՆ Վ.

6. ՍԱՀԱԿՅԱՆ Բ.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



*[Signature]* Ա. ՀԱԿՈԲՅԱՆՅԱՆ



# ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

13 սեպտեմբերի 2011թ.

ԹԻՎ 45(Ա)

### ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՔԱՂԱՔԻ «Վ. ՈՍԿԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱԶԱՏԱՄԱՐՏԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ» ՎՈՒՐԳ ՈՍԿԱՆՅԱՆԻ ՎԵՀԱՐՁԱՆԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 1999թ. օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 511 որոշման կարգի 2-րդ կետը, հաշվի առնելով Վ. Ոսկանյանի քույրերի համաձայնությունը, նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով 6 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ

### ՍԻՍԻԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

- 1. Համաձայնվել Սիսիան քաղաքի «Վ. Ոսկանյանի անվան Ազատամարտի հրապարակում» Վուրգ Ոսկանյանի վեհարձանի իրականացման Սիսիանի քաղաքային համայնքի ղեկավար Ա. Հակոբջանյանի առաջարկին:
- 2. Համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթները:

Կողմ -6

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ Հ.

2. ԱՎԱԳՅԱՆ Ա.

3. ԱՐՇԱԿՅԱՆ Ա.

4. ԴԱՎԹՅԱՆ Ա.

5. ԻՎԱՆՅԱՆ Վ.

6. ՍԱՀԱԿՅԱՆ Բ.

*(Handwritten signatures of the council members)*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ա. ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ





# ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

13 սեպտեմբերի 2011թ.

ԹԻՎ 46(Ա)

### ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՔԱՂԱՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՅՈՂ 2,0 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2001թ. հունվարի 17-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին» թիվ 30 որոշման կարգի 4-րդ կետը և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով 6 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ

### ՍԻՍԻԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի քաղաքային համայնքի գլխավոր հատակագծով նախատեսված արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության 3,6հա հողամասից (ծածկագիր վկ. 2729876, կադ. համար 09-006-0106-0016) առանձնացնել համայնքային սեփականություն հանդիսացող Սիսական 76 հասցեի 2,0 հա հողամասը համաձայն կազմված հողօգտագործման ժամանակավոր սխեմայի (կցվում է հավելվածը) և սահմանված կարգով նպատակային նշանակությունը փոխել բնակավայրի նշանակության:

2. Համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթները:

Կողմ -6

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ Հ.

2. ԱՎԱԳՅԱՆ Ա.

3. ԱՐՇԱԿՅԱՆ Ա.

4. ԴԱՎԹՅԱՆ Ա.


5. ԻՎԱՆՅԱՆ Վ.

6. ՍԱՀԱԿՅԱՆ Բ.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

 Ա. ՀԱՊՈՐՋԱՆՅԱՆ





# ՀՀ ԱՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

13 սեպտեմբերի 2011թ.

Թիվ 47(Ա)

### ՀՀ ԱՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 20) կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին մասով ու 67-րդ հոդվածի 1-ին կետով, հիմք ընդունելով ու ՀՀ կառավարության 2007թ. օգոստոսի 9-ի թիվ 980-Ն որոշման ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով 6 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ

### ՍԻՍԻԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. ՀՀ Այունիքի մարզի Սիսիանի քաղաքային համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի հասարակական կառուցապատման տարածազնահատման գոտիականության 12-րդ գոտու Սիսական 46ա/41 հասցեում գտնվող 115քմ հողամասը (վկ. 2729835, կադ. համ. 09-006-0108-0019) օտարել աճուրդով:
2. ՀՀ Այունիքի մարզի Սիսիանի քաղաքային համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի հասարակական կառուցապատման տարածազնահատման գոտիականության 12-րդ գոտու Սիսական 50/32 հասցեում գտնվող 83քմ հողամասը (վկ. 2729850, կադ. համ. 09-006-0108-0030) օտարել աճուրդով:
3. ՀՀ Այունիքի մարզի Սիսիանի քաղաքային համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի հասարակական կառուցապատման տարածազնահատման գոտիականության 12-րդ գոտու Արամ-Մանուկյան 3/13 հասցեում գտնվող 182քմ հողամասը (վկ. 2729878, կադ. համ. 09-006-0109-0025) օտարել աճուրդով:
4. ՀՀ Այունիքի մարզի Սիսիանի քաղաքային համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի հասարակական կառուցապատման տարածազնահատման գոտիականության 13-րդ գոտու Իսրայելյան 57 հասցեում գտնվող 1041քմ հողամասը (վկ. 2729874, կադ. համ. 09-006-0105-0021) օտարել աճուրդով:


5. Համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհարաժեշտ գործառույթները:

Կողմ -6

Դեմ -0

Ձեռնպահ -0


1. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ Հ.



2. ԱՎԱԳՅԱՆ Ա.



3. ԱՐՇԱԿՅԱՆ Ա.



4. ԴԱՎԹՅԱՆ Ա.




5. ԻՎԱՆՅԱՆ Վ.



6. ՍԱՀԱԿՅԱՆ Բ.



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Ա. ՀԱՊՐԱՆՅԱՆ



# ՀՀ ԱՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

13 սեպտեմբերի 2011թ.

Թիվ 48(Ա)

### ՀՀ ԱՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱԴԱՏՄԱՆ ՏԱՐԱԾԱԳՆԱՀԱՏՄԱՆ 13-ՐԴ ԳՈՏՈՒ ԳԱՅԻ 21/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏԵՎՈՂ 18ՔՄ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16 հոդվածի առաջին մասի 20) կետով, ՀՀ «Հողային օրենսգրքի» 66 հոդվածով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2001թ. ապրիլի 12-ի թիվ 286 որոշման կարգի 20 կետի գ) ենթակետը և 2007թ. օգոստոսի 9-ի թիվ 980-Ն որոշումը, նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկն ու Սևադա Բաբայանի դիմումը՝ որոշման նախագծի քվեարկության արդյունքներով 6 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ

### ՍԻՍԻԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի քաղաքային համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի հասարակական կառուցապատման տարածագնահատման գոտիականության 13-րդ գոտու Գայի 21/1 հասցեում գտնվող 18քմ հողամասը (վկ. 2795605, համ. 09-006-094-016) ուղղակի վաճառքի միջոցով՝ 1քմ 342 ՀՀ դրամ արժեքով օտարել քաղաքացի Սևադա Բաբայանին՝ իրեն պատկանող շինության ընդլայնման համար:
2. Համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհարաժեշտ գործառույթները:

Կողմ -6

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ Հ.

2. ԱՎԱԳՅԱՆ Ա.

3. ԱՐՇԱԿՅԱՆ Ա.

4. ԴԱՎԹՅԱՆ Ա.

5. ԻՎԱՆՅԱՆ Վ.

6. ՍԱՀԱԿՅԱՆ Բ.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ա. ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ



# ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

13 սեպտեմբերի 2011թ.

ԹԻՎ 49(Ա)

### ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾԱԳՆԱՀԱՏՄԱՆ 12-ՐԴ ԳՈՏՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 20) կետով, ՀՀ հողային օրենսգրքի 76 հոդվածի 1-ին և 3-րդ կետերով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2007թ. օգոստոսի 9-ի թիվ 980-Ն որոշումն ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով 6 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ

### ՍԻՍԻԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի քաղաքային համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի հասարակական կառուցապատման տարածազնահատման 12-րդ գոտում գտնվող Սիսական 46/1 հասցեի 550քմ հողամասը (համաձայն հավելվածի) կառուցապատման իրավունքով տրամադրել մրցույթով, 99 տարի ժամկետով:
2. Սիսիանի քաղաքային համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի հասարակական կառուցապատման տարածազնահատման 12-րդ գոտում գտնվող Որոտան 4-1/1 հասցեի 142,6քմ հողամասը (համաձայն հավելվածի) կառուցապատման իրավունքով տրամադրել մրցույթով, 25 տարի ժամկետով:
3. Համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթները:

Կողմ -6

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ Հ.

2. ԱՎԱԳՅԱՆ Ա.

3. ԱՐԵԱԿՅԱՆ Ա.


4. ԴԱՎԹՅԱՆ Ա.

5. ԻՎԱՆՅԱՆ Վ.

6. ՍԱՀԱԿՅԱՆ Բ.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ա. ՀԱԿՈՒԲՅԱՆՅԱՆ



ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՒՄԱԿՈՐ ՀՏՏԱԿԱԳԻՏ



Հասցեատուր են  
 ղեկավար *[Signature]* Գրքակազմի  
 ԿՏ ..... 20... թ.  
 Հովանավորի հաստատագրի  
 Մ 1: 1000

Հարմարված է Միսիանի թաղաքային համայնքին

Մյուսիքի մարզի Միսիանի թաղաքային համայնք  
 Հողամասը տրամադրող

Հողամասի իրարարական հատվածից


Մ 1:5000



Յուրակիրը (հասցեն) Մյուսիքի մարզ, ք.Միսիանի Միսիանի թաղ	Անկյունների թիվն	Կարգիչներ		Գծային չափեր	Մասնատված հարգադրություններ	Հողամասը ծանրարժեքի է
		X	Y			
Հանկազմը	1					Ոչ
Հողակցման նպատակը՝ կառուցման և ապաստարկման համար	2					
Հարմարված է կառուցման նպատակով (հատկապես)՝ բնակավայրերի	3					
Հարմարված է կառուցման նպատակով (հատկապես)՝ կառուցման և ապաստարկման համար	4					
Հարմարված է կառուցման նպատակով (հատկապես)՝ կառուցման և ապաստարկման համար	5					
Հարմարված է կառուցման նպատակով (հատկապես)՝ կառուցման և ապաստարկման համար	6					
Հարմարված է կառուցման նպատակով (հատկապես)՝ կառուցման և ապաստարկման համար	7					
Հարմարված է կառուցման նպատակով (հատկապես)՝ կառուցման և ապաստարկման համար	8					
Հարմարված է կառուցման նպատակով (հատկապես)՝ կառուցման և ապաստարկման համար	9					
Հարմարված է կառուցման նպատակով (հատկապես)՝ կառուցման և ապաստարկման համար	10					
Հարմարված է կառուցման նպատակով (հատկապես)՝ կառուցման և ապաստարկման համար	11					
Հարմարված է կառուցման նպատակով (հատկապես)՝ կառուցման և ապաստարկման համար	12					
Հարմարված է կառուցման նպատակով (հատկապես)՝ կառուցման և ապաստարկման համար	13					

Մ ընկերքը (հա. քմ) 550 քմ





# ՀՀ ԱՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

13 սեպտեմբերի 2011թ.

ԹԻՎ 50(Ա)

### ՀՀ ԱՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԱՌԱՆՑ ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հ օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 20) կետով, ՀՀ հողային օրենսգրքի 76 հոդվածի 1-ին և 5-րդ կետերով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2001թ. ապրիլի 12-ի թիվ 286 որոշման կարգի 46.2 կետի ա) ենթակետը և 2007թ. օգոստոսի 9-ի թիվ 980-Ն որոշումն ունկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով 6 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ

### ՍԻՍԻԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի քաղաքային համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի հասարակական կառուցապատման տարածազնահատման 12-րդ գոտում գտնվող Որոտան 4-1/2 բազմաբնակարան բնակելի շենքին կից 20քմ հողամասը (համաձայն հավելվածի), առանց մրցույթի տրամադրել կառուցապատման իրավունքով, 25 տարի ժամկետով:
2. Սիսիանի քաղաքային համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի խառը կառուցապատման տարածազնահատման 13-րդ գոտում գտնվող Շահումյան 72 բազմաբնակարան բնակելի շենքի դիմացից 851քմ. տարածք (համաձայն հավելվածի) առանց մրցույթի 20-ական քմ.-ով կառուցապատման իրավունքով տրամադրել 43 հատ ավտոտնակներ կառուցելու նպատակով:
3. Համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթները:

Կողմ -6

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ Հ.

2. ԱՎԱԳՅԱՆ Ա.

3. ԱՐՇԱԿՅԱՆ Ա.

4. ԴԱՎԹՅԱՆ Ա.

5. ԻՎԱՆՅԱՆ Վ.

6. ՍԱՀԱԿՅԱՆ Բ.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՀԱՎՈՐՋԱՆՅԱՆ

ՀՊՐԱՄԱՍԻ ՉԼԵԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ



Հատարում են  
 սրբաբանական համալսարանի  
 ղեկավարի ~~Ս. Սահակյանի~~ ԿՏ  
 հրովմամբ  
 20 թ. N ..... որոշմամբ  
 20 թ. N ..... որոշմամբ  
 ՌԿՄԿՊԿԻՆԻ  
 Հողամասի հատակագիծ  
 1:100

Այունիքի մարզի Սյուխանի քաղաքային համայնք «.....»  
 Հողամասը տրամադրող

ՆՈՐԱՅՐ ՄՈՎԱԽԱՅԱՆ-ԻՆ

համարված է

Հողամասի իրադրական հատակագիծ  
 N 1:2000



Սկզբնական դրամիչք վճար ընթացք	Կողորինատներ		Սահմանակից հողօգտագործողներ	Հողամասը ժամրաբեռնված է նչ
	X	Y		
1	8587645.46	4376619.98		
2	8587641.10	4376622.43		
3	8587643.08	4376625.90		
4	8587647.44	4376623.46		
5				Հողամասը տեղեկանքում նշահարված է դեղին գույնով
6				
7				
8				
9				
10				
11				պաշտոնը
12				պաշտոնը
13				պաշտոնը

Սկզբնական վայրը (հասցեն) Այունիքի մարզ,  
 Սյուխան, Որոտան 4 -- 1/2

Վճարագիր 09-006-0249-0033

Սահմանափակումը նպատակը՝ կառուցման և  
 օգտագործման համար

Հողամասին նշանակությունը  
 (նպատակը)՝ բնակավայրերի

Սահմանափակումը նշանակությունը  
 (նպատակը)՝ բնակելի

Սկզբնական հատակագիծ  
 (հա. քմ)՝ 20 քմ



ՀՈՂԱՄԱՍԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻՐ

Հաստատում հիմ

Միջինի բարձրագույն դպրոցի  
 ղեկավար *[Signature]*

Մյուսիքի մարզի Միջինի բարձրագույն համայնք

Հորամանը տրամադրող

20... թ. N..... որոշմամբ  
 հ.Տ.




Հանձնարված է \_\_\_\_\_ ին

Հանձնարված է կադրային հատակագիծ

Հորամանի հատակագիծ

Մ 1:2000

Մ 1:



Անկյունների բնիման	Կոորդինատներ		Գծային չափեր	Մասնամակից հողօգտագործողներ	Հորամանը ծանրաբեռնված է
	X	Y			
1					12
2					
3					
4					
5					Հորամանը տեղեկանքում նշանակված է Մուգ գույնով
6					
7					
8					
9					
10					պահուստի
11					միջանկյալ
12					պահուստի
13					պահուստի

1. Կրկնահարկ (հասցեն) Մյուսիքի մարզ, Զ. Միջինի, Շահումյան 72

Կադրային

2. Երեսօրհան կալուստներ՝ ակադեմիկներ

3. Կրկնահարկի նշանակությունը

4. Կրկնահարկի նշանակությունը

5. Կրկնահարկի նշանակությունը՝ բնակավայրերի

6. Կրկնահարկի նշանակությունը

7. Կրկնահարկի նշանակությունը՝ խառն կառուցվածքային գոտի

8. Կրկնահարկի նշանակությունը՝ 851 բլ



# ՀՀ ԱՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

13 սեպտեմբերի 2011թ.

ԹԻՎ 51(Ա)

### ՀՀ ԱՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 13-Ի ԹԻՎ 40(Ա) ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70 հոդվածի 6-րդ կետով, նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով 6 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ

### ՍԻՍԻԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի քաղաքային համայնքի ավագանու 2011 թվականի հուլիսի 13-ի «ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի քաղաքային համայնքին որպես նվիրատվություն Բելգիայից ներմուծված 12 /տասներկու/ տոննա ներկը անհատուց օգտագործման տրամադրելու մասին» թիվ 40(Ա) որոշումը շարադրել նոր խմբագրությամբ.

1. ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի քաղաքային համայնքին Մակար Գրիգորյանի կողմից որպես նվիրատվություն Բելգիայից ներմուծված 12 /տասներկու/ տոննա ներկը անհատուց օգտագործման տրամադրել.

1) «Սիսիանի թիվ 1 ՆՈՒՀ» ՀՈԱԿ-ին՝ 500 կգ, շենքի ներքին հարդարման աշխատանքների իրականացման համար.

2) «Սիսիանի թիվ 2 ՆՈՒՀ» ՀՈԱԿ-ին՝ 500 կգ, շենքի ներքին հարդարման աշխատանքների իրականացման համար.

3) «Սիսիանի թիվ 3 ՆՈՒՀ» ՀՈԱԿ-ին՝ 500 կգ, շենքի ներքին հարդարման աշխատանքների իրականացման համար.

4) «Սիսիանի թիվ 4 ՆՈՒՀ» ՀՈԱԿ-ին՝ 500 կգ, շենքի ներքին հարդարման աշխատանքների իրականացման համար.

5) «Սիսիանի երաժշտական դպրոց» ՓԲԸ-ին՝ 800 կգ, շենքի ներքին հարդարման աշխատանքների իրականացման համար.

6) «Մանկապատանեկան ստեղծագործության կենտրոն» ՀՈԱԿ-ին՝ 800 կգ, շենքի ներքին հարդարման աշխատանքների իրականացման համար.

7) «Սիսիանի բնակարանային կոմունալ տնտեսություն» ՀՈԱԿ-ին՝ 7200 կգ, բազմաբնակարան շենքերի շքամուտքերի վերանորոգման աշխատանքների իրականացման համար.

8) Համայնքի նստավայրի վերանորոգման աշխատանքների իրականացման համար՝ 700կգ.

9) «Սիսիանի թիվ 1 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ին՝ 100 կգ, շենքի ներքին հարդարման աշխատանքների իրականացման համար.

10) «Սիսիանի թիվ 2 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ին՝ 100 կգ, շենքի ներքին հարդարման աշխատանքների իրականացման համար.

11) «Սիսիանի թիվ 4 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ին՝ 100 կգ, շենքի ներքին հարդարման աշխատանքների իրականացման համար.

12) «Սիսիանի թիվ 5 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ին՝ 100 կգ, շենքի ներքին հարդարման աշխատանքների իրականացման համար.

13) «Սիսիանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 1 հատուկ /օժանդակ/ դպրոց» ՊՈԱԿ-ին՝ 100 կգ, շենքի ներքին հարդարման աշխատանքների իրականացման համար:


2. Համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթները:

Կողմ -6

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ Հ.



2. ԱՎԱԳՅԱՆ Ա.



3. ԱՐՇԱԿՅԱՆ Ա.



4. ԴԱՎԹՅԱՆ Ա.




5. ԻՎԱՆՅԱՆ Վ.



6. ՍԱՀԱԿՅԱՆ Բ.



 Ա. ՀԱԿՈԲՅԱՆՅԱՆ



# ՀՀ ԱՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

13 սեպտեմբերի 2011թ.

ԹԻՎ 52(Ա)

**ՀՀ ԱՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵՎԱՎԱՐԻ 2011Թ. ՕԳՈՍՏՈՍԻ 30-Ի «ՍԻՍԻԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 318(Ա) ՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16 հոդվածի առաջին մասի 14) կետով և 52 հոդվածի 2) կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին կետով ու 9-րդ հոդվածի 1-ին և 5-րդ կետերով և նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով 6 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ

### ՍԻՍԻԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել համայնքի ղեկավարի ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի քաղաքային համայնքի «Սիսիանի ֆուտբոլի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին 2011թ. օգոստոսի 30-ի թիվ 318(Ա) որոշումը:
2. Հաստատել «Սիսիանի ֆուտբոլի դպրոց» ՀՈԱԿ-ի կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:
3. Համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Կողմ -6

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ Հ.

2. ԱՎԱԳՅԱՆ Ա.

3. ԱՐՇԱԿՅԱՆ Ա.

4. ԴԱՎԹՅԱՆ Ա.

5. ԻՎԱՆՅԱՆ Վ.

6. ՍԱՀԱԿՅԱՆ Բ.

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵՎԱՎԱՐ

Ա. ՀԱՎՈՐՋԱՆՅԱՆ



**Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

*«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԻՍԻԱՆԻ  
ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ՄԻՍԻԱՆԻ ՖՈՒՏԲՈՒԼԻ ԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ  
ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ*

**I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅՑՆԵՐ**

1. Գր Բյուրոյի մարզի Սիսիանի քաղաքային համայնքի «Սիսիանի ֆուտբոլի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ կազմակերպություն) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպություն է:
2. Կազմակերպությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, «Տեղական ինքնակառավարման մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Գր օրենքներով, Հայաստանի Հանրապետության այլ իրավական ակտերով, Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերով, հիմնադրի (համայնքի ղեկավարի) կարգադրություններով, որոշումներով և սույն կանոնադրությամբ:
3. Կազմակերպության հիմնադիրն է հանդիսանում Սիսիանի քաղաքային համայնքը (այսուհետ հիմնադիր):
4. Կազմակերպության գտնվելու վայրն է Գր Բյուրոյի մարզ, ք. Սիսիան, Ֆիզկուլտուրնիկների 5ա:
5. Կազմակերպությունը որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Կազմակերպությունն իր անունից ձեռք է բերում ու իրականացնում գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրում պարտավորություններ, դատարանում կարող է հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:
6. Կազմակերպությունն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և կազմակերպության հայերեն անվանմամբ կլոր կնիք, կարող է ունենալ իր անվանմամբ ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման միջոցներ:
7. Կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:
8. Կազմակերպությունը այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:
9. Կազմակերպության անվանումն է՝
  - 1) հայերեն՝ Լրիվ – Հայաստանի Հանրապետության Բյուրոյի մարզի Սիսիանի քաղաքային համայնքի «Սիսիանի ֆուտբոլի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն,
  - 2) կրճատ – «Սիսիանի ֆուտբոլի դպրոց» ԳՐԲԿ
10. Կազմակերպությունում չեն թույլատրվում քաղաքական և կրոնական կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը:

**II. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԵՊԱՏԱԿՆԵՐԸ**

11. Կազմակերպության գործունեության նպատակը՝

- 1) պատանիների, դեռահասների և երիտասարդների շրջանում ֆուտբոլային մարզական ընդունակությունների զարգացումն է,
- 2) նպատակ մարզիկների առողջության պահպանմանն ու ամրապնդմանը,
12. Կազմակերպությունը պատասխանատու է ուսումնական պետական ծրագրերին, սովորողների տարիքային ֆիզիոլոգիական և սոցիալ հոգեբանական զարգացման առանձնահատկություններին, հակումներին, ընդունակություններին համապատասխան ուսուցման մեթոդների և ձևերի ընտրության, ինչպես նաև նրանց կյանքի և առողջության պահպանման համար:

**III. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ**

13. «Սիսիանի ֆուտբոլի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կառավարումն իրականացնում է հիմնադիրը՝ համայնքի ղեկավարը, կազմակերպության տնօրենի միջոցով, որին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է համայնքի ղեկավարը Գր օրենսդրությամբ սահմանված կարգով:
14. Հիմնադիրն իրավունք ունի կազմակերպության գործունեությանը և կառավարմանը վերաբերվող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:
15. Կազմակերպության հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝
  - 1) կազմակերպության հիմնադրումը,
  - 2) կազմակերպության գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում՝ նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը,
  - 3) կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող համայնքի պատկանող գույքի կազմի հաստատումը,
  - 4) կազմակերպության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը,
  - 5) կազմակերպության վերակազմակերպումը և լուծարումը,
  - 6) կազմակերպության լուծարման հանձնաժողովի նշանակումը և լուծարման հաշվեկշիռի հաստատումը,
  - 7) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:
16. Կազմակերպության տնօրենի հետ կնքվում է աշխատանքային պայմանագիր, որը հիմնադրի անունից ստորագրում է համայնքի ղեկավարը: Պայմանագրով սահմանվում են կազմակերպության տնօրենի իրավունքները, պարտականությունները, պատասխանատվությունը և փոխհարաբերությունները հիմնադրի հետ, նրա աշխատանքի վարձատրման պայմանները, պայմանագրի դադարման օրենքով նախատեսված բոլոր հիմքերը և այլ դրույթները, որոնք պայմանավորվող կողմերը ամհրաժեշտ կգտնեն: Պայմանագրի դրույթները չեն կարող հակասել Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրության պահանջներին:
17. Կազմակերպության տնօրենը օրենքով, հիմնադրի որոշումներով, սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է կազմակերպության գործունեությունը և կրում է պատասխանատվություն օրենքների, իրավական այլ ակտերի, հիմնադրի կամ նրա կողմից լիազորված մարմնի որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:
18. Կազմակերպության տնօրենը չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:
19. Կազմակերպության տնօրենը լրիվ գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով կազմակերպությանը, համայնքին կամ պետությանը պատճառված վնասի համար: Նրա լիազորությունների դադարեցումը հիմք չէ պատճառած վնասը հատուցելու պարտականությունները չկատարելու համար:
20. «Սիսիանի ֆուտբոլի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենը՝
  - 1) առանց լիազորագրի հանդես է գալիս կազմակերպության անունից, ներկայացնում է կազմակերպության շահերը երրորդ անձանց հետ փոխհարաբերություններում և կնքում է գործարքներ,
  - 2) Գր օրենսդրությամբ, հիմնադրի որոշումներով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները,
  - 3) տալիս է կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր,
  - 4) աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում է կազմակերպության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր,

- 5) սահմանված կարգով համայնքի ղեկավարի հաստատմանն է ներկայացնում կազմակերպության տարեկան ծախսերի նախահաշիվը, կազմակերպության գործունեության մասին տարեկան հաշվետվությունները,
- 6) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,
- 7) ստորագրում է ֆինանսական փաստաթղթեր,
- 8) սահմանում է կազմակերպության հաստիքացուցակը, ֆինանսական-տնտեսական ծրագիրը և ներկայացնում հիմնադրին:
- 9) հաստատում է կազմակերպության աշխատողների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային գրույքաչափերը, ներքին կարգապահական կանոնները,
- 10) հաստատում է կազմակերպության գործունեության ներքին փաստաթղթերը,
- 11) վերահսկողություն է իրականացնում ֆուտբոլի մարզման բովանդակությանը, մարզումների որակի բարձրացման և մարզական աշխատանքների կազմակերպման նկատմամբ:
- 12) իրականացնում է ՀՀ օրենսդրությանը չհակասող այլ լիազորություններ,
21. Կազմակերպության տնօրենը պարտավոր է չկատարել հիմնադրի ՀՀ օրենսդրությանը հակասող որոշումները, կարգադրությունները, հրամանները, հրահանգները և դրանց չկատարման համար չի կարող ենթարկվել պատասխանատվության:
22. Կազմակերպության տնօրենի բացակայության դեպքում հիմնադրի գրավոր որոշման համաձայն տնօրենի լիազորություններն իրականացնում է կազմակերպության այլ անձ:
23. Կազմակերպության աշխատողների իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են ՀՀ օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ, աշխատանքային պայմանագրով, կազմակերպության առանձին ստորաբաժանումների ու աշխատանքային ներքին կանոնակարգերով և այլ իրավական ակտերով:
24. Կազմակերպության սաների ընդունվելը, ազատվելը, մարզվելը և այլ պայմաններ, բացի սաների վարձավճարի սահմանումից, կարգավորվում է կազմակերպության տնօրենի և սաների օրինական ներկայացուցիչների միջև կնքված գրավոր պայմանագրի հիման վրա:
25. «Սիսիանի ֆուտբոլի դպրոց» ՀՈԱԿ-ում ուսուցումը վճարովի է և վարձավճարը սահմանվում է համայնքի ավագանու որոշմամբ:
26. Հիմնադրի որոշմամբ առանձին կատեգորիայի երեխաներ կարող են ազատվել ուսման վճարից կամ օգտվել զեղչերից:
27. Կազմակերպությունը ուսումնադաստիարակչական աշխատանքները կազմակերպելու համար յուրաքանչյուր տարի հիմնադրի հաստատմանն է ներկայացնում գործունեության տարեկան պլան:

**IV. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ. ՆՐԱՆ ԱՍՐԱԵՎԱԾ ԳՈՐԶԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ**

28. «Սիսիանի ֆուտբոլի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության սեփականությունը ձևավորվում է կազմակերպության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության և օպերատիվ կառավարման իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև կազմակերպության գործունեության ընթացքում ձեռք բերված գույքից: Կազմակերպության գույքի ձևավորման աղբյուր կարող են հանդիսանալ նաև Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների իրավաբանական և ֆիզիկական անձանց կատարած ներդրումները, այդ թվում՝ բարեգործական, հովանավորչական, նպատակային նվիրատվություններն ու հատկացումները:
29. Կազմակերպությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) սույն կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետել, տնօրինել և օգտագործել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:
30. Կազմակերպության սեփականության իրավունքով պատկանող գույքի նկատմամբ հիմնադիրը չունի իրավունքներ, բացառությամբ կազմակերպության լուծարումից հետո մնացած գույքի, որը օրենքով սահմանված կարգով անցնում է հիմնադրին:
31. Կազմակերպության սեփականության վրա կարող է բռնազանձում տարածվել միայն դատական կարգով:
32. Հիմնադրի որոշմամբ կազմակերպությանը անժամկետ ու անհատույց օգտագործման իրավունքով կարող է ամրացվել ցանկացած գույք:
33. Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնել իր կողմից կազմակերպությանը ամրացված գույքը:
34. Կազմակերպությունը իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքները օտարել, գրավ դնել, հանձնել անհատույց օգտագործման:
35. Հիմնադրի կողմից կազմակերպությանն ամրացված անշարժ գույքի կամ պետական պարտադիր գրանցման ենթակա գույքի նկատմամբ կազմակերպության օգտագործման իրավունքը ծագում է դրանց նկատմամբ իրավունքի պետական գրանցման պահից:
36. Կազմակերպությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է իր ֆինանսական միջոցները,
37. Կազմակերպության գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել աուդիտի՝ համայնքի ղեկավարի կողմից ընտրված աուդիտորի կողմից:


**V. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ**

38. «Սիսիանի ֆուտբոլի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել և լուծարվել հիմնադրի որոշմամբ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով և այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով:
39. Կազմակերպության լուծարման դեպքում կազմակերպության պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքն ուղղվում է համայնքային բյուջե:

**VI. ԵՂՐԱՓՈՒԿՆԵՐ ԴՊՈՒՅԹ**

40. Սույն կանոնադրությունը ուժի մեջ է մտնում հաստատման պահից և գործում է մինչև կազմակերպության իրավունակության և գործունակության դադարեցումը:

ԱՆՍՏԱՎԱԶՄԻ ԶՈՐՏՈՒՐՆՈՒ



Վ. ՄԻՐԱԲՅԱՆ



# ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

13 սեպտեմբերի 2011թ.

ԹԻՎ 53(Ա)

### ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԿՈՂ ՄԱՐԶԱԴԱՇՏԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԵՎ ԱՆԺԱՄԿԵՏ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 20) կետով և նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով 6 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ

### ՍԻՍԻԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

- 1. Համայնքային սեփականություն համարվող մարզադաշտը անհատույց և անժամկետ օգտագործման տրամադրել ՀՀ Սյունքի մարզի Սիսիանի քաղաքային համայնքի «Սիսիանի ֆուտբոլի դպրոց» ՀՈԱԿ-ին:
- 2. Աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող օրենքով սահմանված գործառույթները

Կողմ -6

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ Հ.

2. ԱՎԱԳՅԱՆ Ա.

3. ԱՐՇԱԿՅԱՆ Ա.

4. ԴԱՎԹՅԱՆ Ա.

5. ԻՎԱՆՅԱՆ Վ.


6. ՍԱՀԱԿՅԱՆ Բ.

*(Handwritten signatures of the six members listed above)*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *(Signature)* Ա. ՀԱԿՈԲՅԱՆՅԱՆ







# ՀՀ ԱՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

13 սեպտեմբերի 2011թ.

ԹԻՎ 54(Ն)

### ՀՀ ԱՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի ԹԻՎ 90(Ն) ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լրացում

14.09.11թ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70 հոդվածի 5-րդ կետով և որոշման նախագծի քվեարկության արդյունքներով 6 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ

### ՍԻՍԻԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. ՀՀ Այունիքի մարզի Սիսիանի քաղաքային համայնքի ավագանու դեկտեմբերի 17-ի «ՀՀ Այունիքի մարզի Սիսիանի քաղաքային համայնքի կողմից 2011թվականին մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» թիվ 90(Ն) որոշումը լրացնել 4<sup>1</sup> կետով.  
«4<sup>1</sup> ՀՀ Այունիքի մարզի Սիսիանի քաղաքային համայնքի «Սիսիանի ֆուտբոլի դպրոց» ՀՈԱԿ հաճախող մեկ երեխայի ամսական վարձավճարը 2011թվականի համար սահմանել երեք հազար հինգ հարյուր դրամ»:
2. Համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհարաժեշտ գործառույթները:

Կողմ -6

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ Հ.

2. ԱՎԱԳՅԱՆ Ա.

3. ԱՐԵԱԿՅԱՆ Ա.

4. ԴԱՎԹՅԱՆ Ա.

5. ԻՎԱՆՅԱՆ Վ.

6. ՍԱՀԱԿՅԱՆ Բ.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



*[Signature]* ԱՇԽԱՏԱՆՅԱՆ



# ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

13 սեպտեմբերի 2011թ.

ԹԻՎ 55(Ա)

### ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ՍԻՍԻԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ԴՊՐՈՑ» ՀՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԻ ՆՇԱՆԱԿՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16 հոդվածի առաջին մասի 15) կետով և նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով 6 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ

### ՍԻՍԻԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

- 1. Համաձայնություն տալ ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի քաղաքային համայնքի «ՍԻՍԻԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ԴՊՐՈՑ» ՀՈԱԿ-ի տնօրենի պաշտոնում համայնքի ղեկավարի ներկայացրած թեկնածու Դավիթ Արզումանյանի նշանակմանը:
- 2. Համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ -6

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ Հ.

2. ԱՎԱԳՅԱՆ Ա.

3. ԱՐՇԱԿՅԱՆ Ա.

4. ԴԱՎԹՅԱՆ Ա.


5. ԻՎԱՆՅԱՆ Վ.

6. ՍԱՀԱԿՅԱՆ Բ.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Ա. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ



**ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

**ՈՐՈՇՈՒՄ**

13 սեպտեմբերի 2011թ.

ԹԻՎ 56(Ա)

**ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 12-Ի «ՍԻՍԻԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 28(Ա) ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» օրենքի 70 հոդվածի 5-րդ կետով և նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով 6 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ

**ՍԻՍԻԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝**


1. ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի քաղաքային համայնքի ավագանու 2011 թվականի մայիսի 12-ի «Սիսիանի քաղաքային համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի» կազմը հաստատելու մասին» թիվ 28(Ա) որոշման 1-ին կետը լրացնել 9)-րդ ենթակետով. «9) Լիլիթ Օհանյան – սոցիալական աշխատող, հանձնաժողովի անդամ»:
2. Համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհարաժեշտ գործառույթները:


Կողմ -6

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ Հ.
2. ԱՎԱԳՅԱՆ Ա.
3. ԱՐՇԱԿՅԱՆ Ա.
4. ԴԱԿԹՅԱՆ Ա.
5. ԻՎԱՆՅԱՆ Վ.
6. ՍԱՀԱԿՅԱՆ Բ.



**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**  **Ա. ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ**